ԳԼՈՒԽ Թ
ՄԱՂԱՍ[116] ԲԵՐԴԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Հունաց Մորիկ[117] թագավորը ազգությամբ հայ էր՝ Արարատ գավառի Օշական գյուղից: Նրան հաջողվեց թագավորել Կոստանդնուպոլսում քառասուներկու տարի: Սա իր հայրենի երկիր Հայաստան Մաղաս անունով հայազգի մի մարդ ուղարկեց, որ իր անունով մի քաղաք կառուցի Հայաստանում: Սա գնաց, Շիրակ գավառում Անիին մոտիկ՝ հարավային կողմը, Ախուրյան գետի ափին երկու լեռների միջև մի տափարակ տեղ գտավ, որը երեք կողմից շրջապատված էր բարձր քարափներով, իսկ արևմտյան կողմը փոքր-ինչ հարթ էր, բայց քիչ զառիվայր: Տեղը հավանեց, այն պարսպեց և դուռ կախելով անվանեց Մաղասաբերդ: Քանի դեռ իշխանությունը քրիստոնյաների ձեռքին էր, քրիստոնյաներ էին տիրում Մաղասաբերդը: Երբ կրկին ընկավ պարսիկների ձեռքը, պարսիկները Մաղասաբերդը տիրեցին մինչև մեր օրերը: Մեր ժամանակ մի մահմեդական օսմանցի ծպտվեց կարմիրագլուխների (պարսիկների) կերպարանքով, հագավ մորթի, իրեն անվանեց օրինապահ, որ նշանակում է ավդալ կամ դարվիշ: Սա երբեմն գնում էր Կարբի, երբեմն՝ Մաղասաբերդ: Այսպես երթևեկությամբ ծանոթացավ Մաղաս բերդի սուլթանին: Այնպիսի հավատարմություն ցույց տվեց, որ բերդի բանալին վստահեցին նրան: Այնպես եղավ, որ սուլթանը գնաց Երևան. սուլթանը ազգությամբ բողչալու էր: Բերդում թողեց իր որդուն: Բերդում էր նաև դարվիշը: Օրերից մի օր Կարսի փաշայի մոտ ուղարկեց մի մարդ և զեկուցեց նրան, թե այսինչ գիշերը եկեք դուք այս բերդի դուռը, և ես սա կտամ ձեր ձեռքը:

Երբ օսմանցիք այս լսեցին, ուրախացան, պատրաստեցին երկու հարյուր մարդ, պայմանավորված գիշերը պատրաստվեցին և ելան արագավազ ձիերով գնացին ձորի բերանը. իջան, ձիերը կապեցին այնտեղ, իսկ իրենք ոտքով անձայնուն ընթացան մինչև բերդի դուռը: Իսկ անիծյալ ավդալը (օրինապահը) կանգնած էր պարսպի վրա ու նայում էր: Եվ տեսավ օսմանցիների զորքը, քանի որ ձեռքին բերդի բանալին ուներ, բացեց դուռը և նրանց ներս մտցրեց: Բռնեցին սուլթանի որդուն և գերեցին նրա մեջ եղածներին:

Իսկ սուլթանի կինը երբ տեսավ, որ բերդը գրավեցին, իր երեսը պատեց գլխաշորով, իրեն բարձր քարից վայր նետեց և մեռավ: Այսպես քաղաքը ընկավ օսմանցիների ձեռքը մինչև այսօր: Երևանի խանը այս լսելով բռնեց սուլթանին, մորթը տիկ հանեց, լցրեց խոտով, ուղարկեց շահին, իսկ ինքը զորք ուղարկեց Քրդստանի կողմը, բերեց շատ ավար և գերիներ թվով հարյուր քառասուն: Այս տեղի ունեցավ 1087 (1638) թվին:

ԳԼՈՒԽ Ժ
ԹԱԹԱՐՆԵՐԻ ԳԱԼԸ ԵՐԵՎԱՆ

Երբ Կարսի թուրքերը գրավեցին Մաղասաբերդը, իրենց արքա սուլթան Մուրադին ավետիս հղեցին: Թագավորը հրամայեց, որ բերդը տան նույն գրավողին որդեցորդի: Եվ այդպես էլ եղավ, (գրավողը) կոչվում է Խաթունօղլի: Ինքը սուլթան Մուրադը առավ իր զորքը ավելի քան յոթ հարյուր հազար և գնաց Բաղդադի վրա:

Հինգ հարյուր թաթար Կաֆայից ուղարկեց Կարին Քանան փաշայի մոտ և պատվիրեց նրան՝ հավաքել մերձակա փաշաներին զորքերով և գնալ պարսից կողմերը՝ ավարելու և գերեվարելու: Նա հավաքեց բոլորին, ինչպես որ հրաման առավ՝ Կողոնիայի[118] փաշային, որ Շապղարասարն է, Դարունքի[119] փաշային, որ Հասան Ղալան է, Կարսի փաշային, Ախալցխայի Սաֆար փաշային, հավաքվեցին ավելի քան քառասունը և եկան Արարատի երկրի վրա, հասան մինչև Կոտայք[120] գավառը, գերեցին, ավարեցին, ինչ որ գտան: Երևանի խանը այս լսելով հավաքեց իր զորքերը շատ քիչ և ելավ Քանաքեռի դիմացի առապարը, անկոխ տեղով գնաց իսմայելացիների զորքերի վրա: Գնացին մինչև Կետրոն* (Քեթրան), անցան Հրազդան գետը, որ կոչվում է Զանգու: Նրանց ձիերը ծարավից պապակված էին, ջուր խմեցին ու ծանրացան: Եվ գնացին Պտղնի[121] կոչված ավերակ գյուղի վերևը և ընդհարվեցին միմյանց: Իսմայելացիք կանչեցին բարձրաձայն աղաղակով և հարձակվեցին պարսիկների վրա: Ոմանք հետապնդեցին խանին

* Բնագիրն է Գետրոն: Հրատարակիչը անծանոթ բառ է կարծել: Զանգվի ափի Քեթրան գյուղի Կենտրոն անունն է՝ Կոտայքի շրջանում: